№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1894

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԵՒ

ՅԱԻԵԼԻԱԾՈՎ

Դաստիարակների համար

ՏԱՄՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№№ 5—6

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ

Типографія Груз. Изд. Т—ва. || Տպար. Վրաց Հրատ. Ընկ.

1894

Дозволено цензурою. Тифлисъ. 28 Іюня 1894 года.

ԹՈՉՆԱՃԱՆՃԵՐ (ԿՈԼԻԲՐԻՆԵՐ)

(աշխարհիս ամենափոքր թռչունը)

Ա Շ Ո Ւ Դ Ը

Խուրջինը ուսովը,
Սազը իր ձեռին,
Կանգնել էր աշուղը
Փողոցի միջին։

Խփում էր սազին,
Դողցնում լարեր,
Երգում սազի հետ,
Թուում իր ցաւեր։

Երգն էր սրտառուչ,
Տխուր, ողբագին,
Մի բողոք էր այդ
Դառնացած սրտին.

Բողոք անիրաւ
Ճակատագրի դէմ,
Բողոք աշխարհի
Զրկանքների դէմ...

*
* *

Երգը վերջացաւ
Սազը դէն դրեց,
Երկու կոյր աչերը
Դէս ու դէն ուղղեց.

«Ողորմեցէ՛ք, պարոններ,
Հացի կարօտ աշուղիս,
Ողորմեցէ՛ք, տիկիններ,
Կոյր ու անճար թշուառիս»։

*
* *

Անցան պարոնները,
Ոտով ու կառքով,
Շքեղ զարդարուած
Տկզած փորերով.

Անցան տիկիններ,
Նազով ու սազով,
Մետաքսեան ու ոսկին
Փայլում էր շուքով։

Եւ ոչ մին խղճաց
Կոյր ու անանկին,
Եւ ոչ մին բացաւ
Բերան քսակին։

*
* *

Դարձեալ հնչեցին
Նոյն սազի լարեր,
Դարձեալ լսեցին
Նոյն տխուր երգեր.

Դարձեալ նոյն բողոք
Իր սև բախտի դէմ,
Բողոք աշխարհի
Զրկանքների դէմ...

Ծ Ե Բ Ո Ւ Կ

ՍԱՐԴԻ ՕՐՀԱՍԸ

I.

— Ըհ՛ զզզ... այստե՛ղ, այստեղ Թռէք, իմ սիրելի եղբայրնե՛ր, դժբախտ իմ քոյրե՛ր, ազգայիննե՛ր, տառապեալ մայրե՛ր, վշտացած հայրե՛ր... Այսպէս բզզաց մի վառվռուն ու կայտառ ճանճ և նստեց սենեակի պատից կախած մեծ հայելու շրջանակի վրայ: Սրա խրոխտ ձայնից իսկոյն ամեն կողմից բզզբզզալով, տզտզալով հաւաքուեցին սենեակի բոլոր ճանճերը և խմբուեցին միասին: Ամբողջ շրջանակը սևացաւ ճանճերով: Տիրեց լռութիւն: Վառվռուն ճանճը սրտի խորքից ծանր ախ քաշեց և շարունակեց.

— Երկա՛ր, երկար կրեցինք հալածանք մեր ոսոխներից. վերջապէս ժամանակ է համերաշխ կերպով մի գործ սկսել, մի որ և իցէ ելք մտածել, որովհետև մեր թշնամիների թիւը օրըստօրէ մեծանում է, ամենքը մեզ խելթ աչքով են նայում, ամեն-

քը մեզ աշխատում են վրաս ել, մինչև անդամ փոքրիկ մանուկներն էլ սկսել են մեզ հալածել, բռնել, ձեռքի մեջ տրորել ու խեղդամահ անել...

— Խօսքդ շաքարով, ինամր ջան, ընդհատեց մի ուրիշ ճանճ,—բայի դրանից հիմա մարդիկ ինչոր թունալից թղթեր են հնարել, որ ջրի մեջ թրջելով ամանների վրայ դնում են լուսամուտներում: Ինքդ բեխաբար անց ես կենում, ուզում ես չորացած կոկորդդ մի քիչ զովացնել ու ծարաւդ կոտրել, նստում ես այդ ամանների կողքին, լսատում ես միջի հեղուկը, յեսոյ անցնում է մի քանի րոպէ, աղիքներդ ըսկսում են կտրտուել և վերջը գնում ես «փ վերին Երուսաղէմ»:

— Այդ բոլորը ոչինչ, անիծած սարդը՞, սարդը՞... Ասաց մի երրորդը:

—Օ՜հ, այդ արիւնարբուի անունը մի տալ, Աստուած նրա դատաստանն անի, պայծառ արևին կարօտ մնայ, նրա կեանքը խաւարի՜...

—Բաւական չէ, ինչքան կոտորեց մեր որդոց, անփորձ պատանիներին, մեր սիրելիների արիւնը ծծեց, այժմ էլ ասում են

թէ գիշեր ցերեկ իր ոտայինների մէկը տա-
սըն է չինում, ասում են լուսամոի ճակա-
տը լցրել է ցանցերով, որ էլի մեր ոտները
մճճի, մեզ արնաքամ անի...

— Այդ գիտենք, այդ բոլորը գիտենք.
միայն հարկաւոր է մի հնար գտնել, որ
ազատուենք այդ չարիքներից, ասաց առա-
ջին ճանճը,—դուք, փորձւած ծերեր, խո-
սեցէք, մի խորհուրդ տուէք:

— Որդի, պէտք է համբերենք, էլ ինչ
ճար ունինք, նւազած ձայնով բզզացին մի
քանի ծեր ճանճեր,—հարկաւոր է համբե-
րել և դդոյշ լինել...

— Ձենք համբերիլ, գոռացին մի քանի-
սը,—բողոք, բողոք...

— Եղբայր, ո՞ւմ պիտի բողոքես, քանի
որ ամենքն էլ մեզ ատում են ու հալա-
ծում...

—Կրկուենք, կըմաքառենք մեր թշնա-
միների դէմ, ասեցին ուրիշները:

—Միանանք և ընդհանուր ուժով քան-
դենք, կոտրանենք սարդի բոյնը...

— Ջարդենք, կտրտենք այն չարանեն-
դի ոտայինները, կոտորենք նրա ձագերին...

— Այո, այո, ընդհանուր ուժով, ջար-
դենք, խփենք, կոտրենք, կտրտենք...

Մինչդեռ նրանք ոգևորված և վրէժխնդրութեան կրակով վառված՝ պատրաստում էին արշաւանք գործել դէպի սարդի բոյնը, յանկարծ երեսարբիչի ծայրը թըրըխկաց հայելու շրջանակին և ցրուեց բոլոր սարսափահար ճանճերին այս ու այն կողմ: Այդ չարաճճի Լևոնիկն էր, որ սենեակում վազվզելիս յանկարծ նկատելով խմբուած ճանճերին, կամեցաւ նրանց գլխին ոյին խաղալ:

II.

Ոչ մի րոպէ հանգիստ չունի մեր պառաւ սարդը: Նայիր վերև, դէպի առաստաղը: Փոքրիկ ծակից սկսած մինչև աջ ու ձախ անկիւնները՝ ձգում, տարածում է նա իր ոստայնները. իսկ այս ու այն կողմից կախկխած են չորացած և արնաքամ ճանճերը, որ կարծես ապուխտներ լինեն քաշուած: Սարդը քաշելով դէպի ընի ներսը իր վիճակարի ոտները, կծկւում, կուչ է գալիս և սպասում անմեղ զոհերին: Հէնց որ մի ճանճ յանկարծ ընկնում է նրա որոգայթների մէջ, իսկոյն նա կայծակի արագութեամբ դուրս է վազում և ընկնում տզտզացող որսի վրայ: Խեղճ

ճանճը մղկտում է, մղկտում ու վերջը շունչը փչում:

Թէպէտ ճանճը երկու աչքի տեղ տասնեակ աչքեր ունի, բայց դարձեալ նրան անհնարին են մնում սարդի լարած հազար ու մէկ խորամանկ որոգայթները: Հիմա փոքրիկ ընթերցողս կ'ասի—ինչպէս թէ տասնեակ աչքեր: Այո, ճանճը երկուսի տեղ տասնեակ աչքեր ունի: Եթէ չէք հաւատում, վերցրէք խոշորացոյցը և նայեցէք: Ճանճի գլխի վրայ դուք առաջ կըտեսնէք երկու հատ խոշոր աչքեր, որոնց եթէ ուշի ուշով զննելու լինինք, կըտեսնենք, որ նրանք կազմւած են մի խումբ փոքրիկ աչքերից:

Բայց բան է, եթէ հետաքրքրութիւնից դրդւած խոշորացոյցով դուք զննելու լինէք ճանճին, չըմոռանաք դիտել և նրա ոտները, որոնք պատած են աղւամազով. իսկ ոտների ծայրերը վերջանում են փոքրիկ փափուկ և մածուցիկ բարձիկներով: Հէնց այդ մածուցիկ բարձիկների շնորհիւն է, որ ճանճերը առաստաղին կամ ապակիների վրայ նստելիս գլխկոնձի չեն տալիս: Հէնց ճանճի այդ բրդբրդոտ ոտներն են, որ խճճւում են ոստայնների մէջ և էլ չեն կարողանում

ազատել... Օ՜ Նայիր—սուտ չեն ասում. «Շան անունը տուր, փայտը վեր ա՛ռ»... Տես այն ճանճին, ինչպե՞ս աղիողորմ նա տզզում է սարդի կնճիթի տակ: Մօտ գնա և նայիր: Դու կարծում ես՝ թէ այդ տզզոցը ճանճի կոկորդից է դուրս գալիս: Ո՛չ: Այդ նրա թևերն են, որոնք արագ-արագ թափահարելով, գարկում են օդին և ձայն արձակում ջութակի լարերի նման: Ճանճերը նայում են հեռուից իրանց թշուառ ընկերին, նայում են և հառաչում, գիտեն, որ այդպիսի մի օրհաս էլ իրանց է սպասում:

— Օ՜, ողորմելը այդ թշուառին... բաց թո՛ղ գրան, աղաչում ենք, գոչում էին սարդին մի քանի ճանճեր հեռուից,—ինսայիր գոնէ դրա անտէր, անպաշտպան ձագուկներին, ինսայիր դրա երեկւայ ածած 90 ձւաներին...

Իսկ սարդը բոլորովին անտարբեր, ձգելով ճանճի արեան վերջին կաթիլը, պատասխանեց.

—Ես իմ բերանի լազաթը կորցնեմ, թէ ինչ է, սա ձագուկներ ունի՞, թէ ինչ է սա երեկ 90 հատ ձու է ածել...

III.

Արևը դեռ նոր էր ոսկեզօծել շրջակայքը, երբ մանտիապանները վեր կացան իրանց քնած տեղից և սկսեցին օդում ծւծւալ ու կերակուր ճարել: Մանտիապաններն էլ սենեկային ճանճի պէս են, բայց նրանց գոյնը դեղին է և պատւած են կարմիր բծերով: Բացի դրանից սրանք շատ յաղթանդամ և անվախ ճանճեր են: Ոչ մի սարդ չի համարձակւիլ մանտիապայի մի մազին դիպչել և ասել թէ՝ աչքիդ վրան յօնք կայ. իսկոյն սա սարդի ճաշը կ'եփի և անուշ կ'անի սրա մարմինը:

Մանտիապաների զարթնելուց անցել էր երկու ժամ, երբ դրանց համայնքին ներկայացան մի խմբակ սենեկային ճանճեր: Վերջիններս պատգամաւորներ էին, որ յարգանքով գլուխ տւեցին մանտիապաներին և ասացին.

—Ողջոյն ձեզ, քաջերիդ, բոլոր սենեկային ճանճերի կողմից: Մենք գարձեալ դիմում ենք ձեզ և աղերսում ձեր օգնութիւնը: Խղճացէք ձեր հարազատ եղբայրներին, ձեր ցեղակիցներին, որոնք դիշեր ցերեկ ոչ մի հանգիստ չունին չար թշնամիներից... Ան-

գումի սարդը, այն անիրաւը բաւական չէ, ինչքան զոհեր տարաւ մեզանից, այժմ էլ նոր-նոր թակարդներ է լարում մեզ որսալու համար: Այդ ոճրագործի ոտայինները պատել են արար աշխարհը, ամեն րոպէ, ամեն վայրկեան ահը մեր սրտից չէ հեռանում... Մտէք մի վայրկեան մեր դրութիւնը, եթէ ունէք ճանճի զգացմունք, և տեսէք որքան ծանր է հօրը բաժանել իր որդուց, մարդուն իր կնոջից, սիրելին իր սիրելից... Օ՜, ազաչում ենք, գոնէ մի փոքրիկ խմբակ ուղարկեցէք և մեզ՝ թշւառներիս, ազատեցէք այդ պատուհասներից... Եթէ դուք մեզ օգնէք, Աստուած էլ ձեզ կ'օգնի:

—Դու ինքդ օգնիր քեզ, Աստուած էլ քեզ կ'օգնի, վրայ բերեց մի սրախօս մանտիսպայ:

—Լաւ ես հրամայում, ազա՛, բայց մենք մեզ երբէք չենք կարող օգնել, ասաց մի ճանճ,—մենք մեզ չենք կարող օգնել, որովհետև մեր մէջ միութիւն չկայ... Բացի դրանից հէնց որ հաւաքւում ենք մի քանի ճանճ միասին ողբալու մեր վիճակը կամ մի որև է խորհուրդ անելու, իսկոյն երեսրբիչով, կամ մի ուրիշ շորով մեզ քշում և հալածում են...

Մանտիսպանների աչքերը լցւեցան խըղճահարութեան արտասունքով։ Մի պառաւ մանտիսպայ, առաջ գալով ասաց.

—Հալածւած ցեղակիցներ, մենք արդէն երեւակայում ենք ձեր տարտամ վիճակը, ձեր վիշտն ու աղէտը... Մենք վաղուց ուզում էինք ձեզ օգնութեան ձեռք կարկառել, պատժել, ջնջել աշխարհի երեսից չարագործ սարդին. բայց մինչեւ այժմ մենք զբաղւած էինք մեր ներքին գործերով։ Թէպէտ մի քանի անգամ խոստացել էինք ձեզ օգնելու, բայց ժամանակ չունէինք։ Այժմ հասել է ժամը, երբ պիտի սրբենք մեր եղբայրների արտասուքը... Գնացէք խաղաղութեամբ, ողջունեցէք բոլոր ճանճերին և ասացէք, որ սարդը իր բոլոր ընտանիքով մանտիսպանների ճանկերի բաժին կըլինի շուտով...

Ճանճերն ուրախ ուրախ բզզացին և թռան դէպի իրանց համայնքը՝ աւետելու ուրախալի լուրը։ Ճանապարհին թռչելու ժամանակ պսպղում էին նրանց թափանցիկ և ցանցապատ թեւերը արեւի ճառագայթների տակ։

IV

Մինչդեռ ճանճերը և մանուկները պատրաստութիւններ էին տեսնում, մեր սարդը իր բնի մէջ հանգիստ ձուաներ էր ածում: Ածած ձուաները նա պատեց չորս կողմից մետաքսե բոժոժով, փայփայեց և նստեց նրա առաջ: Սարդը գիշեր-ցերեկ մայրական սիրով խնամք է տանում իր բոժոժի վրայ, որից պիտի դուրս գային փոքրիկ ձագուկներ և օգնէին իրան՝ ճանճերին վերաբերեալ գործի մէջ: Նա անհամբեր սպասում է իր փոքրիկ սարդերին, թէ ե՞րբ պիտի նրանք դուրս գան ձուաներից, կազդուրուեն, ծակեն բոժոժը և դուրս գան, ընկնեն իրանց մօր կարօտ գիրկը:

Անցան օրեր: Սարդի բնի խորքերից մի ինչ որ քրքրթոց էր լսւում: Սարդը ականջ էր դնում և փառաւորւում: Նա կարծում էր թէ՝ այդ իր ձագուկներն են շունչ առել և շարժւում են բոժոժի մէջ: Նա ուրախութիւնից այս ու այն կողմն էր վազվզում, շուտ-շուտ դուրս էր գալիս բնից և ոտայնները արձակում դէպի զանազան կողմեր: Հէնց որ նա բնից դուրս էր գալիս, խորհրդաւոր քրքրթոցն աւելի աստիճանում

էր: Այդ մանտիսպաների ձևաններից գո-
յացած որդունքներն էին, որոնք գողունի
մտել էին սարդի բոյնը ետևի կողմից: Այդ
անթիվ որդունքները իրանց ամուր ծամե-
լիքներով ծակում էին սարդի բոժոժը, որ
ներս սլանն, խժռեն բոլոր փոքրիկ սարդե-
րին, որ յետոյ թևաւոր մանտիսպաները գա-
նան և պատաւ սարդին մկրտեն:

—Այստեղ եմ, այստեղ եմ, բալա՛, իմ
նախշուն ձագուկնե՛ր...—ձայն էր տալիս
պատաւ սարդը, մօտենալով բոժոժին, երբ
նրա միջից լսում էր քրքրթոցը:

Թշուառականը չըգիտէր, որ իր բալա-
ներն արդէն գոհ են գնացել սոված ման-
տիսպանների որկորին: Նա դեռ չըգիտէր,
որ իր սեփական փայփայած բոժոժում իր
ձագուկների փոխարէն, ոխերիմ թշնամի-
ներն են բոյն դրել:

—Բալա ունեմ նազանի, չեմ տալ հա-
զար թումանի... Կրկին ձայն է տալիս
սարդը և ուրախ-ուրախ վազվզում:

Իսկ մանտիսպանները լսելով նրա ձայնը,
ներսից ծիծաղում են և իրար մէջ ասում:

—Ողորմելի, դու քնած ես, իսկ ոտքերդ

սառն ջրում: Սարդը դարձալ մօտեցաւ բո-
ժոժին.

—Կըգուրգուրեմ բալաներիս, կըփայ-
փայեմ ձագուկներիս... Խեղճը դեռ չէր ա-
ւարտել բերանի խօսքը, երբ յանկարծ բո-
ժոժը ճեղքուեց և դուրս թռան ահռելի
մանտիսպանները, որոնք ահու սարսափ սիրտ-
լով շուրջը և ամբողջ բոյնը թնդացնելով
բարձրաձայն բզզոցներով, յարձակուեցին լե-
զապատառ սարդի վրայ... Մի ակնթար-
թում ոչնչացաւ արիւնաբու սարդի մար-
մինը: Բոլոր սենեկային ճանճերի ուրախու-
թեանը չափ չըկար: Ամենքը համբուրում
էին միմեանց և շնորհաւորում այդ երջա-
նիկ օրը: Յետոյ բոլոր ճանճերը մեծ հան-
դէս կատարեցին և անվերջ բզզոցով աշ-
խարհս լցրին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Ա. Ն Տ Է Ր Բ Ո Յ Ն

—

Վարդն էլ կոկոնեց, սոխակն էլ եկաւ,
Գոյն գոյն ծաղկըներով դաշտեր զուգեցին,
Ծփացին արտեր մեղմ ալիքներով,
Կենսատու հովից տարուբերուեցին։

*

Խումբ խումբ ծեծառներ եկան տաղերով
Մտան իրանց բոյն ու ճզուղացին,
Միտները թռան՝ ուրիշ տեղերում
Իրանց համար նոր բներ շինեցին։

*

Բայց ծուռ են մեր տան սիրուն ծիծառները,
Ինչի չեն գալիս իրանց օթևան,

Ամենից առաջ քաղցր երգերով
Նրանք էին բերում գալուստը գարնան։

*

Ահա և եկան ուրիշ ծեծառներ
Նրանց օվկեանն են մտնում կարկատում,
Պատրաստ է բոյնը—նրան ճոռում են,
Սլանում հեռուն, պտույտներ անում։

*

Խումբ խումբ ծիծառներ եկան տաղերով,
Մտան իրանց բոյն ու ճզռոդացին,
Բայց մեր ծիծառներ այլ ևս չեկան,
Եւ բոյնը մնաց՝ անտէր—օտարին...

ՍՐԻՆԳ

ՉԸՀՆԱՑՈՂ ՔՍԱԿ

I

— Ո՛վ, ասա տեսնեմ, ո՞ր խելօք մարդը կանէ այդպէս. քո արիւն-քրտնքի գին կոպէկները, փոքրիկ երեխաներիս հացը խլում ես սրան-նրան բաժանում և դեռ պարծենում էլ թէ «չընհնացող քսակի» մէջ ես գցում։ - Այդպէս էր յանդիմանում Նունէն իր ամուսնուն։

— Հոգիս, ասում էր Միքայէլը նրան, ինչո՞ւ չես ուրախանում, որ ես աշխատանքից, ոչ թէ պատուհաս, այլ ոչ «հնացող քսակի» մէջ եմ գցում։

— Աւելի լաւ է դու նրան ծակ քսակ ասես, ոչ թէ «չընհնացող», որովհետև դու բաժանում ես քո եկամուտը սրան-նրան, որ ես կորած եմ հաշւում։ — Գուցէ։

— Ես այնքան չէի զայրանալ, եթէ գոնէ տեսնէի քո այդ երևակայական քսակը, բայց ցաւն այն է, որ չէ էլ երևում քո կարծեցեալ քսակը։

— Հէնց բանն էլ նրանումն է, որ չէ երևում, եթէ նա երևար՝ այն ժամանակ էլ չէր լինիլ չընհնացող, այլ իրրև նիւթ քայքայուղ, պատուհաս։

Այսպէս վիճում էին մարդ ու կին և երբէք հաշտութիւն չէր լինում նրանց մէջ։ Սրանց փոքրիկ Աշոտը աւելի համամիտ էր հօրը և հէնց սա էր պատճառը, որ շատ բան «չընհնացող քսակի» մէջ գցւում էր նրա ձեռքով։

Փոքրիկ ընթերցող, եթէ ուզում ես իմանալ «չըՀնացող քսակի» պատմութիւնը, լսիր, ես քեզ ասեմ։

Միքայէլը, Նունէն և նրանց որդի Աշոտը կազմում էին մի ընտանիք։ Որքան Միքայէլը բարի, ողորմած, անձնուրաց էր, նոյնքան Նունէն անգութ, անողորմ և քարասիրտ էր։ Շատ անգամ Միքայէլը լսել էր եկեղեցում, թէ մարդիկ պէտք է ողորմութիւն տան չունեցողներին, այսպիսով նրանք ձեռք բերած կըլինեն մի «չըՀնացող քսակ»։ Ամեն օր աշխատում էր Միքայէլը մի բան գցել այդ քսակի մէջ, ամեն երեկոյ նա այս հարցն էր տալիս իրան.—ինչ բարի բան գործեցի ես այսօր, և եթէ պատասխանը չէր գտնում՝ չէր կարողանում քնել։ Միքայէլը հիւսն էր, չափազանց աշխատասէր և ժիր, նա իր եկամուտի ուղիղ կէսը ծախսում էր իր ընտանիքի համար, մի քառորդը պահում էր «սև օրւայ» համար, իսկ մնացեալը անպատճառ պիտի բաժանէր աղքատներին։ Նունէին այդ բանը դուր չէր գալիս, շատ անգամ էլ կռւում էր Միքայէլի հետ, բայց վերջինս իր ասածն էր անում։ Նրա «չըՀնացող քսակը», ինչպէս ինքն էր ասում, չափից դուրս մեծ էր։ Նա լսում էր թէ մէկը հիւանդ է, գնում էր տեսութեան և վերադառնալիս ինքն իրան ասում էր՝ «այսօր քսակիս մէջ մի բան գցեցի»։ Մի օտարական էր գալիս՝ պէտք է Միքայէլը նրան հիւրասիրէր, մի կոյր տեսնէր, պէտք է նրան առաջնորդէր, մի վէճ լինէր՝ պէտք է խաղաղացնէր։ Հազիւ գտնւէր մի մարդ նրա համաքաղաքացիներից, որ չըճանաչէր Միքայէլին, չըդիմէին նրան որ և է անյայտ դէպքում։ Երբ մի բան անում էր նա իր ընկերի համար լոկ մարդասիրական զգացմունքից դրդւած, ուրախանում էր ի նկատի ունենալով՝ թէ ինքն էլ մի բան գցեց «չըՀնացող քսակի» մէջ։

Մի օր նա անցնում էր իր որդու հետ մի նեղ

փողոցով։ Օրն աշնանային էր, ցուրտ քամին սառցնում էր անցնողներին։ «Հայրիկ, հայրիկ, գոչեց Աշոտը, տես այս խեղճ տղան ինչպէս է դողում, տես, նա էլ քսակ ունի»։ Միքայէլը յետ նայեց ու տեսաւ պատի տակ մի ուրթ տարեկան տղայ, ցնցոտիներով փաթաթուած, ձեռքերը կուրծքին սեղմած, ոտքերը թաց, երեսը մրոտած, նա դողում էր, նա լաց էր լինում։

—Մի հացի փող տուէք, ով տղաներ, ձեր ջանին մատաղ. լսում էր նրա բերանից։—Ո՞ւմ տղան ես, հարցրեց շարժուած Միքայէլը, մօտենալով թշուառին։

—Ես ծնողներ չունիմ, ես որբ եմ։—Ինչո՞ւ չես մէկի մօտ ծառայում։—Չեն պահում։—Կուզե՞ս արհեստ սովորել։

—Կուզեմ։

—Դէ գնանք մեր տուն, ասաց նա ու բռնեց փոքրիկ մուրացկանի ձեռքից։

—Տես, Աշոտ, սա էլ քսակ ունի, բայց սրա քսակը մաշուող է։ Ուրախ եմ, որ այսօր էլ իմ քսակիս համար մի բան գտայ։

Գիշերը փոքրիկ որբին կուշտ ուտացրին, տաքացրին։ Առաւօտը Միքայէլը գնեց նրա համար հագուստ, թէև այդ բանի վրայ խիստ չարանում էր Նունէն, ու տարաւ դերձակին յանձնեց։

Միքայէլի ասածն ասած էր. ամեն մարդ նրան յարգում էր. դերձակը ընդունեց Սարգսին ու խոստացաւ արհեստ սովորցնել և պահել իր որդու նման։

II.

Ժամանակն ամեն ինչ փոխում է։ Իշխանները ծառայ են դառնում և ծառաներն իշխան։ Անցել էր այդ օրից ուղիղ տասը տարի։ Մի ձմեռնային օր էր. մարդիկ վերադառնում էին իրանց տները, մէկն իր հաշւագիր-

քը ձեռին, մէսը մի թաշկինակ լիքը չոր մրգերով, մի երրորդը մի ուրիշ բան։ Ցուրտ քամին, բարկացած մարդու նման, վերցնում էր փողոցից ձիւնը և շպրտում անցնողների երեսին. շատերը շտապում էին հասնել իրանց տները, գրկել, համբուրել իրանց երեխաներին և նստել հեշտաեռի առաջ։ Այդ ժամանակ դերձակներից մէկը, որ ձեռին ունէր մի մեծ մկրատ, մօտեցաւ պատի տակ կանգնած պատանուն. պատանին ծածկել էր իր գլուխը, մի իր գլխին անհաւասար գլխարկով, երկար արխալուղի կարկատանները մէկէլ էին պատառոտուել. ոտի մատները դուրս էիր եկել կօշիկների ծակերից, դէմքը այլանդակած, ուսերը բաձրացրած՝ նա դողում էր ամբողջ մարմնով. նա լացում էր և հեղեղի նման հոսող արտասուքների կաթիլները թափւում էին նրա ուսից կախած քսակի վրայ։ Այդ քսակը կրակոտ նետեր խրեցին դերձակի սրտի մէջ։ Դերձակը մեզ ծանօթ Սարգիսն էր. նա կանգնեց և խորը հառաչեց, ընկղմւեցաւ լիշողութեան դառն անցեալի մէջ, մտաբերեց իր մանկութեան թշւառ ժամանակը և բռնելով փոքրիկ մուրացկանի ձեռքից՝ տարաւ իր տուն։

— Սոֆիա, ասաց նա իր կնոջը, — տեսնում ես այս ողորմելի պատանուն. լիշում եմ մի երեկոյ ես էլ այդ դրութեան մէջ էի, մի բարի մարդ ինձ տարաւ յանձնեց Տէր-Մարուքեանցին և այժմ մենք մեր ամբողջ ընտանիքով և ապահով վիճակով պարտական ենք այն բարի մարդուն։ Դէ, շուտ արա թէյ բեր, խմենք։

Նրանք թէյ խմեցին և յետոյ Սոֆիան անմիջապէս պատրաստեց սեղան։

Սարգիսը մի այնպիսի տրամադրութեան մէջ էր, որ ոչ մի բան չէր կարողանում խօսել. նրանք խնդրեցին, որ մուրացկանն իր գլխի անցածը պատմէ։ Պատանին սկսեց. «Հայրս մի արհեստաւոր մարդ էր. նա

մեծ կարողութիւն չունէր, բայց մեծ անուն ունէր. նա ուրախանում էր, հէնց որ հասարակաց շահերին մի որևէ ծառայութիւն էր անում. ամենքը նրան սիրում էին, մեր քաղաքացիներն ամենքը կրճանաչէին հէնց որ ասէին «չըհնացող քսակ» ունեցող Միքայէլ։ (Սարգիսը վերջին խօսքերը լսելիս մի սառսուռ զգաց)։ Մենք ապրում էինք երջանիկ, բայց յանկարծ ամեն ինչ փոխուեց. հայրս մեռաւ խոլերից։ Մեր կոպեկների մի մասը, որ հայրս հաւաքել էր սև օրւայ համար, նրա թաղման մսխեցինք. մի մասն էլ մի քանի տարի միայն բաւականացաւ. մայրս տրտնջալով՝ ծանր հոգսերից մեռաւ։

—Դու Միքայէլի որդի Աշոտն ես. ասաց Սարգիսը կէս ուրախութեամբ ու կէս զարմանքով. խեղճ որբը մի խորը հառաչեց։—Այո՛, նրա որդին եմ, պատասխանից նա։

—Այն բարեգործ Միքայէլի որդին, որ ինձ մի օր յանձնեց դերձակ Տէր-Մարուքեանցին։—Այո, ես նրա որդին եմ, պատասխանեց նա, հեղեղի նման արտասուք թափելով աչքերից,—հանգամանքները բերին ինձ այս օտար երկիրը։

Նա լիշում էր իր ուրախ անցեալը և իր սիրելի ծնողներին...

—Աշոտ, դու իմ եղբայրն ես, ասաց Սարգիսը թըշւառ որբին, ես քո հօր հացովն եմ այսօր կերակրւում ու կերակրում ուրիշներին, ինչ որ իմն՝ է քոնն է, մնացիր ինձ մօտ, երդւում եմ Աստուծով մինչև կեանքիս վերջը սիրել քեզ հարազատ եղբօր պէս և մնալ հաւատարիմ դէպի իմ ուխտը։ Ես էլ եկել եմ այս քաղաքն ապրուստս հայթհայթելու համար։

—Եւ ես երդւում եմ լինել քո կրտսեր եղբայրը, ասաց Աշոտն ուրախութեամբ։

Անցան մի քանի տարիներ և քաղաքի կենդրոնում մի համեստ տան մէջ ապրում էր մի բազմանդամ ընտանիք՝ ուրախ, գոհ և բախտաւոր։

Դա Սարգսի և Աշոտի ընտանիքն էր և ամբողջ քաղաքի մէջ երանի էին տալիս այն մարդկանց, որ կըսիրէին իրար Սարգսի և Աշոտի նման։

Ափսոս, որ Աշոտի բարեգութ հայրը կենդանի չէր, որ տեսնէր իր բարեգործութեան պտուղը և ուրախանար. ափսոս, հազար ափսոս, որ Աշոտի մայրը կենդանի չէր, որ տեսնէր իր որդու ապահով վիճակը և վերջապէս համոզուէր, որ ամեն ինչ փոխուում, պատուում, մաշուում է, միայն բարի յիշատակը և բարի գործերի պտուղներն են մնում անմահ ու անսպառ։

Ի. ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

ԵՂԶԵՐՈՒ

(Բազիկաչուխիի)

—

—Օ՜հ, օհ, ինչպէս ցուրտ է, ոսկորներս սառչում են, դողս բռնում է, սիրելիս. կպիր ինձ, որ գոնէ քիչ տաքանամ, տեսնում ես ձիւնը ինչպէս գալիս է և նստում մեզ վրայ։ Քիչ ժամանակում այնպէս կըթաթախուենք ձիւնի մէջ, որ էլ չենք երեւալ։ Էլի՛, էլի՛, սիրելիս, երևի վախենում ես, որ մի որ և է տեղ վայր ընկնեմ, այս հաճարի ծառն այնպէս ամուր է կանգնած, որ ոչ թէ ես, այլ ձեան հիւսն էլ որ գիպչի՝ այնուամենայնիւ չի կարող շարժել։

Եղնիկը մրսում էր և այդպէս իր մօտ էր կանչում իր եղջիւրաւոր ընկերին։

—Աղջի՛, ինչ մրսելու ժամանակն է, վախից քիչ է մնում սիրտս դուրս թռչի։ Ձիւնը մէջքիս վրայ տաքութիւնից ջուր է դառնում, սիրտս էլ վախից հալւում է։ Տեսնո՞ւմ ես, ինչ ցուրտ, զզւելի և մութ գիշեր է։ Ա՜խ, այս ինչ վատ տեղ բնակւեցինք։ Սիրտս ինչ որ վատ բան է զգում, կարծում եմ քամու շառաչիւնը թշնամու ոտի ձայնն է։ Ծառի ճիւղերն որ վայր են թափւում, կարծում եմ թէ գայլն է։ Աչսպիսի եղանակին ի հարկէ մարդ չի կարող մեզ այստեղ գտնել. գայլն է ինձ վախեցնում, գա՛յլը։

Գայլի անունը տալուն պէս եղնիկը բոլորովին սառեց, ամբողջ մարմնով սկսեց ողորմելի կերպով դող-

դողալ։ Յիշեց իր ներկայ դրութիւնը, այդքան ձիւնը, այդպիսի ցուրտը, զառիվայր և դարուփոս ճանապարհը, քաղցած գայլը, նրա արիւնոտ աչքերը, սուր ատամները և նրա հետ միասին արագ վազելը։ Խեղճ եղնիկը մոռացաւ թէ ցուրտ, թէ ձիւն և թէ ամեն ինչ։ Երկիւղից սկսեց աւելի դողդողալ, աչքերը չռեց և ուշադրութեամբ սկսեց ականջ դնել։

Հեռուից լսեցաւ բուի ձայնը, խուլ անտառը ինչ որ զգեցնող արձագանք տւաւ։ Եղնիկը վախեցաւ, արիւնը սառաւ նրա երակներում։ Դարձեալ ականջ դրաւ։ Դարձեալ լսեցաւ բուի ձայնը և այդ բացականչութիւնը տարածուեցաւ շրջակայ լեռներում և ախրամած անտառներում։ Եղնիկը դարձեալ վախեցաւ։

— Փառք Աստուծոյ, բուն է եղել, փնթփնթաց եղնիկը։ Ի զուր վախեցայ։

Ահա կտրեց ծառի չոր ճիւղը և ճռճռալով վայր ընկաւ գետնին։ Ձիւնապատ ծառերը խուլ արձագանք տւին։ Եղնիկը վախից դողդողաց, ուզում էր եղջերուին բան ասել, բայց վախից կտրեց նրա ձայնը։ Ականջ դրաւ, մեղմ քամին շփւում էր նոր դրած ձիւնի երեսին և խառնում միմեանց հետ։ Անտառի մերկ ծառերի գագաթները քամու շփմամբ օձի նման սւսւում էին։

«Օ՜հ, դու գիշեր, ինչ դժւար ես ինձ համար, դու ինձ վնասում ես, չէ՞ որ պիտի լուսանաս։ Ով դու ցերեկ, գոնէ հալածէիր դիշերին, որովհետև դա իր կամքով չի անցնում»։ Դողդողալով աղաչում էր եղջերուն, բայց ոչ գիշերն էր անցնում և ոչ էլ լոյս էր երևում լեռան եռևից։ Երևի նա էլ իր ժամանակին էր սպասում։

Որքան գիշերը երկարում էր, նոյնքան եղջերուների համբերութիւնը հատնում էր։

—Ա՜խ, երանի շուտով լուսանայ, այս գիշերը շատ եմ վախենում, բայց չըգիտեմ ինչո՞ւ: Չէ որ ուրիշ ժամանակ էլ գիշերը—ցերեկ անտառումն ենք անց կացնում: Դու ես ինձ վախեցնում, եղջերո՛ւ, դո՛ւ, գոնէ ասա ինձ, շուտով կըլուսանա՞յ, թէ ոչ:

—Նոր է մթնել, երեկոյեան հովը դեռ չի անցել, պատասխանեց վախեցած եղջերուն և կարծէք ինչ որ ձայն լսեց. նա իսկոյն ուշադրութեամբ ականջ դրեց: Ժամին փչեց և նոր ձիւն աճեց նրա ականջներում:

Ժամին շառաչում էր:

—Ուո՛ւ, ուուո՛ւ, ուո՛ւ, լսեցաւ քամու հետ զարհուրելի օռնալու ձայնը:

Եղջերուն վախից քարացաւ: Նրա շունչը կտրւեց:

—Աուո՛ւ, ուո՛ւ, լսեցաւ մի ուրիշ կողմից էլ, իբրև պատասխան առաջին օռնալուն և հանդէպ գըտնւած լեառը վերջին օռնալուն արձագանք տւաւ—ուո՛ւ:

—Աստւա՛ծ, օգնիր մեզ, Աստւա՛ծ մեզ մի՛ կորցնիր, փնթփնթացին երկուսն էլ իրանց մտքում:

—Լսեցի՛ր, դողդոջուն ձայնով հարցրեց եղջերուն եղնիկին:

Եղնիկին հարցնելն աւելորդ էր: Նա խորին կերպով հառաչեց, կպաւ եղջերուին և խելագարի նման աչքերը շուռ ու մուռ տւաւ:

—Այժմ ի՞նչ անենք, եղջերու, մեզ ի՞նչը կարող է փրկել: Չէ՞ որ մեր այստեղ լինելը կիմանան և իմացած էլ կըլինեն և այդ պատճառով է այդպէս օռնում, իր ընկերոջն է կանչում, որ աւելի հեշտութեամբ մեզ բռնեն: Յաւդ առնեմ, եղջերո՛ւ, այժմ ի՞նչ անենք: Մի բան ասա ինձ, թէ չէ այստեղ և եթէ հոգիս դուրս կըգայ, ի՞նչ անենք, երանի մէկը մորթէ մեզ, որ նրանց պատառոտելու չըդառնանք. ով գիտէ,

քեզ ո՞րտեղ կուտեն և ինձ առանց քեզ՝ ո՞րտեղ կըպատառոտեն։ Եղջերո՛ւ, ինձանից չե՞ս հեռանալ, չէ՞, ինձանից չե՞ս փախչիլ, չե՞ս թողլ տալ որ այն արիւնարբուները ինձ ուտեն, ողորմելի կերպով աղաչում էր եղնիկը իր եղջերուին։

— Սո՛ւս, ականջ դիր, լսո՛ւմ ես միւս կողմից ինչ ձայն է գալիս, շատ են հաւաքւել, գլխներիս ճար անենք։

***

Մի րոպէում երկուսն էլ ոտի վրայ էին։ Էլ ինչպէս կարող էին քնել։ Մէջք մէջքի տուին և սկսեցին վազել։ Մութ անտառի մէջ տեղը յանկարծ ինչ որ ճայթեց և ահագին ճռճռոցով վայր ընկաւ գետնին։

Վախեցած թռչունը այս ձայնի վրայ ճըւճըւաց, ցատկեց ու շուտով թագնւեց ծառերի ճիւղերի տակ։ Եղնիկն էլ ցատկեց և բարձր ժայռից ցած սլիտ թռչէր, եթէ եղջերուն չըբռնէր նրան։ — Սպասիր, ցաւդ առնեմ, հանդարտւի՛ր, ուր սլիտ թռչես, ժայռից վայր կընկնես,

կաոր-կաոր կըլինես։ Ծառը կոտրեց և ինչպէս վախեցրեց քեզ։ Նրանք դեռ հեռու են։ Մինչև այստեղ կըգան, կարող ենք գլուխները ազատել։

— Գնանք այստեղից, եղջերու, գնանք։ Սարից ներքև իջնենք, այնտեղ դաշտավայրերը շատ կան, կարող ենք վազել և թագնուել։

Երկուսն էլ զգուշութեամբ, առանց ձայն հանելու, շարժուեցին իրանց տեղից, ոտը դրին լեռան վրայ և իսկոյն կանգ առան։ Եղջերուն իր քիթը մեկնեց և սկսեց ագահութեամբ հոտոտալ օդը։ Հաւատարիմ քիթը յայտնեց նրանց, որ թշնամին մօտիկ է։

— Կասկած չըկայ, որ թշնամին մօտ է։ Դու էլ արի, դարձաւ եղջերուն իր ընկերին։

Եղջերուն և իր ընկերը իսկոյն սկսեցին վազել դէպի ներքև, դաշտավայրերի կողմը։ Կարճ ժամանակից յետոյ դաշտավայրերի կողքին տխլի ծառերի մէջ գտնուած փոքրիկ, դատարկ տեղում կանգնած էին եղջերուն ու իր կինը և այս ու այն կողմ օդն էին հոտոտում, բայց որովհետև քամին արևելեան կողմից էր փչում, այդ պատճառով հիւսիսայինն կողմից ոչինչ չէին կարող լսել։

***

Այդ միջոցին սարի վրայ, որտեղ առաջ բնակւում էին եղջերուն և իր կինը, երկու գայլեր երևացին։ Նրանք մի րոպէում կանգ առան, ինչ որ հոտ զգացին և երկուսն էլ վրայ ընկան եղջերուների պառկած տեղին, որովհետև եղջերուների հոտ էին զգացել և ախորժակը բացւել էր և իսկոյն ուզում էին բերանները քաղցրացնել, բայց խաբուեցին ու երկուսն էլ իրանց քիթերը ձիւնի մէջ կոխեցին։

Նրանցից մէկը կարծէք թէ բանի տեղ չըդրաւ այդ, շուռ եկաւ գնալու, իսկ միւսը ուղղուեց, սկսեց առջևի

և յետևի ոտներով ձիւնը փորել և ետև ածել ու հետը էլ օռնալ իր զզւելի առուն.—վերև բարձրացրեց իր սուր քիթը և սկսեց սառն օդ ծծել, կարծէք իր քթին հարցնելիս լինէր, թէ ուր են գնացել եղնիկը և եղջերուն: Բայց երբ օդից ոչինչ չըհասկացաւ, իսկոյն քիթը կոխեց ձիւնի մէջ և այդպիսով ուղղւեց եղջերուների գնացած ճանապարհով: Յետոյ, երբ համոզւեց, որ յիրաւի այդ կողմով եղջերուները են անցել, դարձեալ հոտոտեց և ցատկոտելով գնաց եղջերուների կողմը:

Եղջերուն օդն էր հոտոտում, երբ յանկարծ ցատկեց և զառիվեր ժայռից ցած թռաւ, բայց ճկուն ոտները այստեղ էլ չըդաւաճանեցին նրան—մի ակնթարթում կրկին ոտի կանգնեց, և յանկարծ նկատեց, որ իր ընկերը թռաւ դէպի դաշտը:

—Ներքև, ներքև, բացականչեց եղջերուն և ինքն էլ աշխատում էր յոլովակ կողմով ներքև թռչել, բայց այդտեղ և եթ, ուր նա ուզում էր թռչել, յայտնւեցաւ մի գայլ: Ուրիշ մէջոց չըկար, միայն սլիտի վազէր այն ընդարձակ զառիվայրի վրայ, ուր մի գազի չափ ձիւն էր դրած: Վազեց եղջերուն, նրան հետևեց և գայլը: Եղջերուն այդ զառիվայրի վրայ և ձիւնի մէջ թռչկոտում էր, ցածր մացառների և կոճղերի վրայով էր ցատկոտում: Ջազգած գայլը չըկարողացաւ իր նպատակին հասնել, բայց ի հարկէ եղջերուին ձեռքից բաց չէը թողնել, քանի որ տեսնում էր նրան իր աչքով: Զառիվայր տեղերը համարեա անցան: Մի թռիչք էր պակաս, որ եղջերուն թռչէը դէպի այն ձորը, ուր երկու ճանապարհ էր գնում, այդ մի ճանապարհը լեռան կողմում, փայտ բերելու համար էր, իսկ միւս ճանապարհը տանում էր դէպի գիւղը: Եղջերուն ձորը ցատկելուց յետոյ կամ դէպի վերև կըգնար,

կամ դէպի ներքև։ Այս երկու մտածմունքի մէջ էր եղջերուն, երբ յանկարծ իր առաջ յայտնուեցաւ ձոր։ Էլ ինչ մտածելու ժամանակն էր, մեկնեց իր ոտները և թռաւ դէպի ցած։ Նա ամբողջ մարմնով խրուեց ձիւնի մէջ։ «Ահա, ամեն բան վերջացաւ,—մտածեց

նա,—այժմ արդէն գայլի կերակուր դարձայ։ Վա՛յ, եթէ ոտներս դաւաճանեցի՛ն», բայց ոչ այժմ և ոչ էլ առաջ ոտները նրան չէին դաւաճանել, եղջերուն խակոյն ոտի կանգնեց և ցատկեց դէպի գիւղը տանող ճանապարհը։ Նրանից յետոյ վերին կողմից, խակոյն ձիւ-

նից դուրս եկաւ նոյն գայլը և ընկաւ եղջերուի յետեւից։

***

Գիւղում բարձրացել է մի սարսափելի աղմուկ, շները հաչում են և կռւում։ Մարդիկ աղաղակում են։ Վախեցած շները դռներին դէմ են ընկել իրանց մէջքերով և ճնշում են, ուզում են կոտրտել, ներս մըտնել տուն։ Հետն էլ հաչում են, որ տէրերը գոնէ զարթնեն և իրանց օգնութեան հասնեն, բայց նրանք ուշադրութիւն էլ չեն դարձնում, իմանում են, որ իրանց շներն այնքան էլ մեծ վտանգի մէջ չեն։ Իսկ օրհնւած «Խ ա յ տ ա ճ ա մ ու կ» շունը գայլերի յետեւից է ընկել, երկու վերստ հեռաւորութեամբ հալածել է նրանց։ Գայլերը նրան ոչինչ չեն կարող անել, շատ անգամ շրջապատեցին նրան, բայց նրանց գլխով թռաւ և փախաւ։ Նա ոչ մի գայլ կենդանի չի թողնում, իսկոյն խեղդում է։

Այդ շան տէրը՝ Մծարիան Կախեթում շատ անգամ փոխել է իր «Խ ա յ տ ա ճ ա մ ու կ ի» խեղդած գայլի կաշին մի կովի հետ։

Այժմս էլ Մծարիան տեղից վեր է կացել, կրակ է վառել, դուռը բացել է, որ շունն իր տան մէջ լոյսը տեսնէ և խրախուսած կուի գայլի հետ։

—Շատ հեռու գնաց իմ «Խ ա յ տ ա ճ ա մ ու կ ը», ասեց Մծարիան, երանի գայլերը չըբռնեն։

Նրան ոչ ոք չըպատասխանեց, որովհետև բացի իրանից, ուրիշ ոչ ոք զարթուն չէր։ Դարձեալ նեցս մտաւ տուն, նստեց օջախի առաջ և սկսեց «Խ ա յ տ ա ճ ա մ ու կ ի ն» սպասել։

***

Այդ ժամանակ եղջերուն, երկու գայլերը և շնե-

ըը բարձրացան արտերի կողմ։ Եղջերուն դադրել է, բայց հանգիստ չէ և իր հալածողը։ Եղջերուն ամեն րոպէ սպասում է, որ իրան պատառոտեն և սրտնեղուած լիշում է իր ընկերին.

— Ո՛վ գիտէ, գուցէ նրան արդէն պատառոտել են, նրա ոսկորներն անգամ այլ ևս չեն լինիլ, իսկ ես կենդանի եմ և փախչում եմ մահից, առանց նրան կեանքն ինչիս է պէտք։ Ո՛վ գիտէ, նրան այժմ ուտում են, իսկ ես չեմ կարողանում օգնել նրան։ Է՜հ, թող ինձ էլ ուտեն։ Էլ ինչու են տանջում։ Այդ միջոցին

եղջերուն նկատեց Մծարիալի տան դռնից լոյսը, որ երկար սիւնի նման դուրս էր ցցւել մթան մէջ։

Սպիտակ լոյսը սպիտակ ձիւնի վրայ, կարծէք կարիքի մէջ ընկածին ձեռք էր մեկնում։ — «Իմպի լոյս, դէպի լոյս... բացականչեց եղջերուն, — նա կազատէ ինձ, այնտեղ է ազատութիւնը... այն կողմ, այն կողմ», բայց կարծէք ոտները չէին հնազանդւում այն կողմ

գնալու, բայց ինքը զօրով ուղղեց դէպի Մծարիայի տունը։

—Այնտեղ մարդ է բնակւում, նա ինձ չի թողնիլ, որ գայլերի կերակուր դառնամ, այդ արիւնարբուներ ձեռքից նա ինձ կազատէ,—մտածեց եղջերուն։—Ինչ և իցէ նա մարդ է, ոչ թէ գայլ, նա կըփրկէ ինձ։

—Ջո գալն օրհնւի, ահա, բախտն էլ սրան են առում, բացականչեց ուրախացած Մծարիան և շփեց վրդին այն ձեռքը, որով խենչար ունէր բռնած։—Յոգնել է, վայ թէ մեռնի, ասեց նա և խենչարը խրեց նրա կոկորդը։

Եղջերուի քրտնքի մէջ թաթախւած այտերի վրայ գլորւեցին տաք արտասուքները և նա անշունչ թաւալւեց օջախի մէջ...

Դ. Տ.-ԴԱՒԹԵԱՆՑ

ՋԱՏԿԱՅԻ ԳԱՌԸ

Արևը արդէն մայր էր մտել. խաշնարած Ադօն, ահագին ցուլը ձեռքին, փափախն աչքերին քաշած, իր ոչխարներին դաշտից քշում էր տուն։ Ոչխարները, կրծնները լիքը կաթով, բակ մտնելուն պէս՝ սկսեցին կանչել իրանց փոքրիկներին։ Ջաղցած գառներն էլ, որ ամբողջ օրը չէին տեսել իրանց մայրերին, լսելով նրանց ձայնը, բարձրացրին իրանց մայոցը։ Երբ Ադօի կինը պատրաստւում էր ոչխարներին կթելու, Ադօն պատւիրեց նրան երեկոյեան և առաւօտը գառներին բաժին կաթը շատ թողնի, որ նրանք կուշտ ուտեն, որովհետև հետևեալ օրը պէտք է գառներին քաղաք տանէր ծախելու։

Ադօի կինը տրտմեց, որ իր ձեռքով մեծացրած սիրելի գառնուկներից պէտք է բաժանւի, Ադօն էլ ուրախ չէր, նա էլ էր սիրում իր գառնուկներին, բայց ագահութիւնը յաղթել էր նրան։ Ջաւիկը գալիս էր, Ադօն լաւ գնով կարող էր ծախել իր գառներին։

Առաւօտեան դեռ լոյսը նոր էր բացւել. Ադօի կինը վեր կացաւ և վերջին անգամ թողեց գառներին իրանց մայրերի մօտ։ Փափլիկները ամեն օրւայ պէս, ուրախ ուրախ վազեցին իրանց մայրերի մօտ։ Խեղճ փոքրիկները չգիտէին թէ իրանց ինչ է սպասում, չգիտէին, որ իրանց կեանքը օրերով է հաշւած և թէ վերջին անգամն են տեսնւում իրանց մօր հետ և ծծում նրա անոյշ կաթը։

Բայց ժամանակն անցնում էր, Ադօն մօտեցաւ և սառնասրտութեամբ խլեց գառնուկներին իրանց մօր գրկից, ոչխարներին յանձնեց իր փոքր որդուն, իսկ

ինքը գառներին առաջ քշեց և դուրս եկաւ տանից։

Մի ժամ անց, քաղաքի մարգարտատ փողոցներից մեկի անկիւնում, արևի տակ նստած էր արդէն Ադօն, շրջապատուած իր գառնուկներով, որոնք, ինչպէս երեւում էր, շատ յոգնած էին. նրանք միմեանց յենուած, դողդողալով, հազիւ էին կարողանում մի կերպ կանգնել իրանց մատաղ ոտիկների վրայ։ Հեռուից այդ գառները նման էին մի ծաղկափնջի, նրանք բոլորն էլ սպիտակ էին, բացի մեկից, որի բուրդը կարմիր էր սպիտակ խալերով, կարծես նա կարմիր մուշտակ էր հագել և մուշտակի վրայ էլ ձիւն էր եկել։ Նա թէև իր բախտակիցների մէջ ամենափոքրն էր, բայց ամենից ժիրն էր և զեղեցիկը։ Արևի ճառագայթները ընկել էին նրա վրայ և նրա մետաքսեայ բուրդը շողշողում էր ոսկու և արծաթի պէս։

Փողոցում անց ու դարձը դժուարին էր, մարդիկ ձմրան քնից կարծես նոր արթնացած՝ վազվզում էին այս և այն կողմը. մեծ պատի վերջին շաքաթներն էր, նրանք պատրաստուելիս էին տեսնում Զատկի տօնին դիմաւորելու։

Ահա հէնց այդ ժամանակն էր, որ մենք մեր հայրիկի հետ անցնում էինք այդ փողոցով։ Հեռուից իսկոյն նկատեցինք այդ մի խումբ գառներին, և մօտեցանք նրանց. չալիկը, որ իր մատաղ հասակով և գեղեցկաձևութեամբ, մեր ուշադրութիւնը գրաւել էր դեռ հեռուից, մօտիկից կրկնապատիկ հրաշալի էր։ Մինչդեռ միւս գառները թոյլ, թմրած աչքերով նայում էին այս և այն կողմը, նա աշխոյժ, վառվռուն աչքերով դիտում էր մեզ. մենք հիացած էինք այդ աննման գառան գեղեցկութեան վրայ։ Հայրիկս, տեսնելով, որ մենք շատ սիրեցինք գրան, առանց երկար խօսելու, գնեց մեզ համար չալիկ գառնուկին Զատկին մորթելու։ Մեր ուրախութեանը չափ չկար, երբ իմացանք որ կարմրամորթ սիրունիկը մերն է, գրկած վազեցինք տուն։ Ճանապարհին մենք երկար խորհրդակցում էինք թէ ինչ գնենք գառնուկի անունը, բայց ոչինչ չկարողացանք որոշել, որովհետև մի ձայն պակաս էր՝ մեր փոքրիկ քոյր Աստղիկը տանն էր մնացել։ Երբ մենք

գառնուկի հետ ներս մտանք, Աստղիկը բակում խաղում էր, գառնուկին տեսնելուն պէս, նա թռչկոտալով մօտեցաւ ու սկսեց անդադար համբուրել նրան։ Գառնուկը մայում էր, ինչպէս երևում էր, քաղցած էր, մենք շուտով բերինք կաթ և նրան կուշտ կերակրելուց յետոյ, անմիջապէս ժողով կազմեցինք, որտեղ և գառնուկի անունը դրինք Մարջան, նրա կարմիր բրդի գեղեցկութեան համար։

Այդ օրւանից Մարջանը դարձաւ մեր սիրելին, մեր խաղի ընկերը։ Ամբողջ օրը մենք խաղում էինք նրա հետ և զարճանում նրանով, իսկ երեկոյեան փափուկ խոտից անկողին էինք շինում և նրան քնացնում. Աստղիկը, որ սիրահարւած էր Մարջանի վրայ, առանց նրան բարի գիշեր ասելու ու համբուրելու՝ չէր կարողանում քնել։

Այդ երկու օրը մեր կեանքը փոխւել էր՝ բոլորս ուրախ էինք, բոլորիս սրտերը բաբախում էին միակերպ, բայց այդ ուրախութիւնը տեղ-տեղ գառնանում էր այն մտքով, որ այդ երջանկութիւնը չըպէտք է երկար տևի՝ մի շաբթից յետոյ Զատիկ էր, Մարջանին պէտք մորթէին, և այդ մեզ սարսափեցնող մտքի հետ մենք չէինք կարողանում հաշտւել։ Մեզանից աւելի շատ խնամում էր Մարջանին Աստղիկը. մինչև կէս օր, երբ դպրոցումըն էինք լինում, Աստղիկն էր մնում Մարջանի հետ, նրանք միասին խաղում էին, միասին ուտում, դրա համար էլ մենք աւելի խղճում էինք Աստղիկին քան թէ մեզ, երբ մտածում էինք Զատկւայ պատուհասի մասին։

Այդ պատճառաւ քանի Զատիկը մօտենում էր, մենք աւելի և աւելի էինք մեղմ վարւում Մարջանի հետ. մենք տանում էինք նրան մօտակայ դաշտն արածելու. գարնանային մաքուր օդը նրան աւելի կազդուրեց և նա քանի գնում, փարթամանում ու գեղեցկանում էր։

ՕՐ. ՎԱՐԴՈՒՀԻ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

(Կըշարունակւի)

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ԱՄԵՆԱՓՈՔՐ ԵՒ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՌՉՈՒՆՆԵՐ

—

Թռչունները կազմում են ողնաւոր կենդանիների երկրորդ դասակարգը (կաթնասունները, թռչուններ, սողուններ, երկակենցաղներ և ձկներ)։ Թռչունները ուրուվհետև լինում են զանազան տեսակ, այդ պատճառով բնագէտները դրանց բաժանել են զանազան դասակարգերի՝ յափշտակողներ և այլն։

Թողնենք թռչունների այդ զանազան տեսակները և տեսնենք թէ որն է ամենափոքրը և որն է ամենամեծ թռչունը։

Ահա այդպիսի հարցով մի անգամ փոքրիկ Արմենուհին դիմեց իր հօրը, երբ նկատեց, որ իրանց պատշգամբի վանդակների վրայ նստած է մի թռչուն։

Փոքրիկ ընթերցող, եթէ Արմենուհին քեզ հարցնէր, դու իսկոյն կըպատասխանէիր, թէ ամենափոքր թռչունը ծիտն է, բայց սխալուած կըլինէիր։ Այժմ լսիր, ես քեզ կըծանօթացնեմ ամենափոքր և ամենամեծ թռչունների հետ։

Ամերիկայում ապրում են մի տեսակ թռչուններ, որոնք այնքան գեղեցիկ են, որ ոչ մի խայտաճամուկ թիթեռ նրանց հետ չի կարելի համեմատել։ Այդ գեղեցիկ բազմազոյն թռչունը կամ մեր սովորական ծտի չափ է, կամ թիթեռի և մինչև անգամ կան այնպիսիները, որոնք մեծութեամբ շատ քիչ են զանազան-

մ օ ա

(Աշխարհիս ամենամեծ թռչուններից)

ւում մեր սենեակի ճանճից: Սպանիերէն լեզուով այդ հրաշալի թռչունին կոլիբրի (թռչնաճանճ) են անուանում (տես երես 191):

Թռչնաճանճերը զարմանալի գոյնզգոյն փետուրներով են զարդարուած, այնպէս որ՝ կարծես ամբողջ մարմնի վրայ ցանած են թանգագին ակնեղէններ: Սիրելի ընթերցող, երբ արեգակի տակ թռչնաճանճը խաղում է՝ զանազան թռիչքներ է անում օդի մէջ, այն ժամանակ կարծես թէ նրանից կրակի բոցեր է ցայտում այս ու այն կողմ և դու ուզղակի չես կարողանում նրա վրայ նայել, իսկոյն աչքերդ ծակոտւում են: Բայց ափսոս, որ այդ թռչունները չեն երգում, այլ միայն ծլվլում են և ամբողջ օրը թիթեռի նման թռչկոտում են մի ծաղկից դէպի միւսը: Երկար ու բարակ կտուց և թելի հաստութիւն ունեցող միջից ճղւած լեզուն, կարծէք դիտմամբ ունենալիս լինեն, որ թիթեռի նման երբեմն մի և երբեմն միւս ծաղկից ծծեն քաղցր հիւթը:

Թռչնաճանճերը չափից դուրս ճարպիկ են: Մի րոպէ հանգիստ չեն մնում, կամ միմեանց հետ են կռւում կամ ծաղիկներով են զարճանում ու անդադար մեղր փնտրում: Շատ անգամ էլ խմբով արշաւում են ճանճերի վրայ:

Զարմանալի են այդ ճանճի չափ թռչուններկ բները: Թռչնաճանճը դիտմամբ այնպիսի տեղ է շինում իր բոյնը, որ ոչ օձը կարող է մօտենալ և ոչ կապիկները կարող են գտնել: Ահա պատկերի վրայ դուք տեսնում էք, (տես սոյն Համարի 3-րդ երես) բարակ ճիւղի վրայ կախւած է թռչնաճանճի բոյնը: Ցետոյ, ինչ էք կարծում, ինչ մեծութիւն պիտի ունենան նրանց ձւաններր: Էգ թռչնաճանճը ընդամենը 2 ձու է ածում, ամեն մի ձուն մի հատ սիսեռից էլ փոքր է: Թռչնաճանճերը իրանց

ձագերին զարմանալի քաջութեամբ ազատում են թշնամուց։

—

Մեծ թռչունները շատ կան, բայց դրանք մեծ են այն ժամանակ, երբ իրանց թևերը բաց են անում։ Մարմնի մեծութեամբ և բարձրութեամբ ամենամեծ թռչունը չալլամն է, որ պատկանում է վազող թռչունների դասակարգին։ Ոտներից սկսած մինչև գլուխը նրա բարձրութիւնը մի սաժէն է։ Նրա ծանրութիւնը տաս փթի չափ է և այնքան ուժեղ է, որ երկու մարդ կարող են ազատ կերպով նստել մի չալլամի վրայ և նա այնպէս կրվազէ, որ ոչ մի արագաթռիչ ձի չի կարող նրան հասնել։

Սիրելի փոքրիկ ընթերցողներ, գուցէ դուք զարմանաք չալլամի այդ մեծութեան վրայ, բայց զարմանալի ոչինչ չըկայ։ Մեզանից 400 տարի առաջ Նոր-Զէլանդիա կղզում ապրելիս են եղել Մ օ ա անունով այնպիսի ահագին թռչուններ, որոնց մօտ չալլամը այնպէս է երևացել, ինչպէս 3 տարեկան երեխան ահագին տղամարդու մօտ։ Մ օ ա թռչունն այժմ այլևս չըկայ։ Մի քանի թանգարաններում միայն գտնում են այդ թռչունների կմաղքները, որից կարելի է որոշել, որ Մ օ ա թռչունը իսկապէս ահագին թռչուն է եղել՝ բարձրութիւնը համարեա երկուսաժէն և երկու արշին։

Բարձրութիւնը իմանալով, ինքներդ կարող էք նրա հաստութիւնն որոշել. նրա սրունգի ոսկորի հաստութիւնը մարդու ազդրի ոսկորի հաստութիւն է ունեցել։

Մ օ ա ի մեծութիւնը իսկութեամբ որոշելու համար նայեցէք «Աղբիւրի» ներկայ համարում (երես 229) գտնւած Մ օ ա-ի պատկերին և դրա բարձրութիւնը համե-

մատեցէք նոյն պատկերի մէջ նկարած մի յարկանի տան հետ։

Սէրելի փոքրիկ ընթերցողներ, թող Մ օ ա ն էլ զբաղացնի ձեզ։ Հին ժամանակ Մադագասկար կղզում ապրելիս են եղել մի տեսակ թռչուններ՝ Է պ ի օ ր ն է ս անունով։ Փարիզի թանգարանում այժմ գտնւում է յիշեալ Էպիօրնէսի ձուն։ Այդ ահագին ձուն չալլամի ձուից վեց անգամ մեծ է։ Եթէ ձեզ ծանօթ թռչնաճանճի



12000 ձուն վերցնենք միասին, հազիւ կըհաւասարւի Է պ ի օ ր ն է ս ի մի ձուին։ Էպիօրնէսի իւրաքանչիւր ձուն հաւասար է հաւի 150 հատ ձուին։ Էպիօրնէսի ձուն այնպիսի պինդ և հաստ կճէպ ունի, որ մուրճով հազիւ կարող էք կոտրել։

«Աղբիւրի» այս համարում մեծութեան համեմատ նկարած են ձուաններ, որոնցից առաջինը Մադագասկարի Է պ ի օ ր ն է ս ի ձուն է, երկրորդը՝ չ ա յ լ ա մ ի, երրորդը հ ա ւ ի, իսկ չորրորդը՝ թռչնաճանճի։

Այժմ ինքներդ կարող էք եզրակացնել, թէ բնութիւնն որքան սքանչելի է։

Դ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Դպրոցական պատանիների համար

Ե. ՏՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆՍՏԱՏ ՊԱՐԱՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1) Պատուհանը կամ լամպը պիտի քո ձախ կողմը գտնուին, գրելիս ուղիղ նըստիր և կուրծքդ մի սեղմիր սեղանի ծայրին.

2) Աթոռն այնքան բարձր պիտի լինի, որ քո կռներդ հաւասար լինին սեղանի երեսի բարձրութեան։ Իսկ եթէ աթոռը, ինչպէս յաճախ պատահում է, ցած լինի, այն ժամանակ մի բարձ դիր աթոռի վրայ, յետոյ նստիր։

4) Ոտերդ դիր յատակի վրայ. իսկ եթէ ոտերդ յատակին չեն հասնում, տախտակ դիր ոտերիդ տակին.

5) Մի նստիր ոտդ ոտի վրայ հեծուցած կամ ոտերդ մեկնած սեղանի տակ։

6) Աթոռի վրայ ուղիղ նստիր, մէջքդ յենիր նրա թիկունքին և գլուխդ չատ առաջ մի ծռիր։

7) Կարդալիս աչքերդ գրքից պիտի հեռու լինին գոնէ 32 սանտիմետր։

Զ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԱՄՔ ՄԱՐՄՆԻ ՎՐԱՅ

1) Թարմ օդը և արեգակի լոյսը անպայման անհրաժեշտ են մեր առողջութեան համար։ Ուստի պիտի ջանալ որ առատօրէն մեր բնակարանը ներս թափանցեն մաքուր օդ և արևի շողեր։

2) Աչխատիր ամրապնդել քեզ, ամեն օր լանալով մարմինդ, կամ գոնէ միայն պաղ ջուր քսելով մարմնիդ, եթէ հնար է ամեն չաբաթ տաք բաղնիք ընդունիր մարմնիդ մաքրութեան համար.

3) Տարւայ տաք միջոցին լողացիր բացօթեայ ազատ ջրերում, մանաւանդ երբ նրանք տաքացած են արեւից։

Տասն լոպէ բաւական է, որ մնաս ջրում, յետոյ լաթով սրբիր թացութիւնը և դնա զբօսնելու արձակ հա-

գուստով մարմնի տաքութեան համար։ Եթէ հնար է, խաղալ և տաք եղանակին լողանալուց յետոյ մի երկու րոպէ մնա մերկ բաց օդում, որ թարմ օդը և արեգակի ճառագայթները ներգործեն մարմնիդ վրայ։

4) Բերանդ և կոկորդդ մաքուր պահիր. առաւօտ, երեկոյ և մի բան ուտելուց յետոյ լաւ լւացիր բերանդ։

5) Ինչքան կարելի է շատ չարժողութիւն արա բաց օդում։

6) Շատ տաք մի հագնուիր. գլուխդ թեթև ծածկիր, իսկ վիզդ բոլորովին բաց թող. մարմնիդ ոչ մի մասը պինդ չըսեղմես։

8) Կօշիկների կրունկները պիտի լինին լայն և տափակ, ցածր։

9) Երբէք թաց չորը վրադ չըպահես, այլ փուխով հանիր։

10) Զափաւոր եղիր ուտելու և խմելու մէջ. գործ չածես փչացած, վատ եփած կերակուր և չատ քաղցրեղէն։ Վարժուիր պարզ կերակուրների և կեր ոչ աւելի քան երեք անգամ օրական։ Զը գործ ածես չատ գրգռեցուցիչ նիւթեր, ծխախոտ, ոգելից ըմպելիքներ. չուտես հում միս և տհաս պտուղներ։

11) Շուտ պառկիր քնելու և վաղ վարձնիր. քնելուց առաջ մի վրդովիր գիչերային հանգստութիւնդ որ և է ֆիզիքական և մտաւոր աշխատութեամբ։

ՀԻՄԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Գ. Բ.

—

21) Թևեր ունի՝ չի թռչում,
Ոտներ չունի՝ մեն է գալիս։

—

22) Ձախից թէ կարդաս — կըսոսկաս,
Աջից կարդաս — մի բան կըզգաս։

—

23) Մի բառ գիտեմ երկվանկանի,
Աչքերի հետ միշտ գործ ունի։
Բառի միջին տառը դէն ձգիր,
Առաջին վանկը — մի դերանուն.
Միւսի վրայ մի շեշտ դիր,
Եւ համաբաձակ հրամայիր։

—

24) Ուղիղ կարդաս — ղդուշացիր, կըէոցեմ,
Աջից կարդաս — իսկոյն և եթ կը վազեմ։

ԹԻՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Աւետ. Ց. Թ.

25) *Պարտիզպանին հարցրին, քանի խնձոր ունես քթոցի մէջ։ Նա պատասխանեց. չգիտեմ, գիտեմ, որ երբ ես զոյգ-զոյգ համարում էի, մէկն աւել էր մնում, երբ 3—3՝ երկուսն աւել, 4 - 4՝ երեքն աւել, 5—5՝ չորսն աւել, 6—6՝ հինգն աւել, 7—7՝ վեցն աւել, 8 - 8՝ եօթն աւել, 9 - 9՝ ութն աւել, իսկ երբ համարում էի 10—10, մնում էր 9 աւելորդ խնձոր։ Քանի՞ խնձոր ունէր քթոցում պարտիզպանը։*

—

26) *Ընտանիքը բաղկացած է ութ հոգուց. հօրից, մօրից և վեց որդուց։*

Հօր տարիքն այնքան է, որքան հինգ մեծ որդոց միասին վերցրած, մայրն այնքան տարեկան, ամսականն և պակաս է, որքան չորս մեծ և մէկ փոքր որդոցը միասին վերցրած։ Մէկը միւսից որդիքը մեծ են տարիքով, ամիսներով և օրերով։ Քանի՞ տարեկան է ամեն մէկը, եթէ բոլորը միասին 126 տարեկան են։

Նախընթաց № 4-ի հանելուկների բացատրութիւնը. 18) *թուէ-ակ (թուէթակ).* 19) *աշուն, շուն.* 20) *ձմեռ։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թռչնաճանճեր (կօլիբրիներ) *պատկեր։ Ա-ղուղը* (ոտանաւոր)—*Ծերուկի։ Սարդի Օրհասը*—*Յար. Թումանեանցի։ Անտէր բոյն* (ոտանաւոր)—*Սրինգի։ Զբոսնացող քսակ*—*Ի. Մարկոսեանցի։ Եղջերու, վրաց. թարգմ. Ի. Տ.-Դաւթեանցի* (պատկերներով)։ *Ձատկաձայ գառը*—*Օր. Վ. Նաւասարգեանի։ Մօա* (պատկեր)։ *Բնագիտական.*—*Պատկերներ թռչունների կեանքից.*—*Ամենափոքր և ամենամեծ թռչունները.*—*Ի. Աստղաբաշխական կանոններ։ Չարաճալիք։*

Խմբագիր հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

Շարունակւում է ներկայ թւականի բաժանորդագրութիւնը և բացւած է երկրորդ կիսամեակինը։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. է, կէս տարւանը 2 ր., ՏԱՐԱԶԻՆԸ տարեկան 6 ր., կէս տարւանը 3 ր.։

Նոր բաժանորդը կարող է ստանալ բոլոր լոյս տեսած №№-ը առանց բացառութեան։

Պրէմիաներ ստացող բաժանորդը, բացի բաժանորդագինը՝ պէտք է ուղարկի ԱՂԲԻՒՐԻ համար 1 ր., ՏԱՐԱԶԻ 4 ր.։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Агбюръ“, կամ “Таразъ”.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

պատկերը ճեւնապակու վրայ

Հատը 3 ր., ճանապարհածախսը ½ ր.

Դիմել՝ Тифлисъ, АГБЮРЪ-ТАРАЗЪ.